ԱԿԱՆՋԴ ԲԵՐ՝ ԱՍԵՄ...

Առաջադրանքներ

1. Հետևյալ դարձվածքների իմաստն արտահայտիր մեկ բառով:

Վերջակետ դնել, անկողին ընկնել, աչքը բաց, սիրտը բաց, կրակի գին, լեզուն կապվել, սոդոմ և գոմոր, աչքը ջուր կտրել, ծեր աղվես, Աստծո կրակ, գլխի ընկնել, սիրտ անել, սիրտը կոտրել:

2. Գրիր դարձվածքներ՝

ա) մարդու մարմնի մասերի անուններով՝ *սիրտ*, *գլուխ*, *լեզու*...

բ) կենդանիների անուններով,

գ) ցերեկային և գիշերային լուսատուներ՝ *արև* և *լուսին* բաղադրիչներով:

3. Դարձվածքների իմաստն արտահայտիր մեկ բառով.

ա) ախորժակը բացել _____

բ) ջրի գին _____

գ) խելքի ծով _____

դ) թևաթափ լինել _____

ե) աչքի լույս _____

զ) ծնկի իջնել _____

է) Աստծու կրակ _____

ը) հոգին ավանդել _____

4. Գրիր նախորդ վարժության դարձվածքների հականիշ դարձվածքները:

5. Աջ և ձախ մասերից ընտրիր հականիշ դարձվածքներ և գրիր կողք կողքի.

կրակի գին	գայլի սիրտ ուտել
լեզու առնել	խելքի ծով
խելքից պակաս	աչքի գրող
լեղին պատռվել	ջրի գին
աչքի լույս	լեզուն բռնվել

6. Աջ և ձախ մասերը միացնելով՝ ստացիր դարձվածքներ: Բացատրիր իմաստները.

խելքը	դողալ
սիրտը	հանել
քիթը	ճոճել
մտքից	կտրել
լեզուն	գնալ
սուր	կախել